

թիւնն այնքան բորբոքուած եւ ոգեստրուած էր՝ որ առաջարկեալ փոփոխութեանց մինք՝ այս ինքն Հաղորդութեան խօրհրդոյ Բաժակին մէջ ջուր խառնել համարձակող կարնոյ Խպիսկոպոսը կըսպաննուի իժողովրդենէ:

Այսպէս ահա չորեքտասաներորդ դարու առաջին քառորդում մեր Եկեղեցւոյ անցեալը շատ ցաւալի տեսարան կներկայացնէ մեզ, եւ կյիշեցնէ ջերմեռանդաւանդապաղահ եւ նախանձախնդիր մի Աղջի արդար ձայնը եւ փափաքը այնպիսի անձանց դէմ՝ որք իզուր կխորհին Եկեղեցւոյ մէջ ծխական արարողութեանց եւ այլոց մէջ նորութիւններ մուծանել, նախնական գեղեցիկ սովորութիւնքը փոփոխել, կրօնը խաղալիկ դարձնել, Աղջի եւ Եկեղեցւոյ հարազատ շահերը եւ ապագայն վտանգել, սակայն քանի վշտառիթ եւ ողբոց արժանի է՝ որ այսպիսի բարենախանձ ջերմեռանդութիւնը ինչպէս շատ անգամ՝ նոյնպէս յայս նուագ զինքն մղած է ծայրայեղ չափազանցութեանց, թէ եւ դարձեալ յանցանքն եւ մեղն պատճառ տուուղներունըն է՝ որ տեղիք եւ գրգիռ կտան ժողովրդեան իւր Ս. Կրօնի եւ Եկեղեցւոյ պաշտպանութեան անձկանօք՝ մի չնչին բանով անգամ՝ մի նոր ինդրով եւ փոփոխութեամբ կյուղվի եւ կտքնի, եւ այս առթիւ Կաթուղիկոսէն սկսած ցիւրջին պաշտօնեայն ով որ լինի՝ անմիջապէս կղինուի նոցա դէմ, եւ ամեն բան կըպաշտպանէ եւ կպահէ:

Իսկ Օշին՝ որ այսպիսի եւ այլ շատ չարեաց պատճառ դարձաւ, անհեռատեսութեամբ եւ անխորհուրդ ընթա-

ցիւր Եկեղեցւոյ եւ Աղջի մէջ խռովութիւնք եւ գժտութիւնք սերմանել զատ՝ օտարաց՝ այս ինքն գրացի մահմետական եւն իշխանութեանց գրգիռ տուող պապականութեան եւ Եւրոպայի հետ ունեցած անօգուտ եւ վնասաբեր յարաբերութեամբք եւս արտաքուստ թշնամիները եւ նոյաթշնամական մոտագրութիւնքը կշարժէ, եւ արեւմուտքէն եւ պապէն յուսացած օգնութիւնքը եւս չգտանելով՝ բաց իյաճախակի ինդրած կրօնական առաջարկութիւններէն, կվախճանի եւ Վեւոն Եկյաջորդէ, որոյ օրով նախորդացն միանգամայն իւր անխոհեմ ընթացից արդիւնքն՝ այս ինքն արտաքին թշնամութիւնքն եւս աւելի յերեւան կդան եւ Կիլիկիա թշնամեաց ոտից կոխան կլինի:

(Հարաբեկին)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՎԵՑ ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄԱԿԱՆ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

ՍԻՄԵՕՆ ԿԱՐՈՒԼԻԿՈՆ

Փառք անբաժանելի՝ համագոյն միասնական սուրբ Երրորդութեանն աօր և Որդւոյ և Առգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Որոյ ամենաբառական ողորմութեամբն և անձառ շնորհիւն, յանկ ելեալ աւարտեցաւ տառս որբարար և կատարելաւ գործիւ, յորում են ձեռնազրութիւնք

Կաթուղիկոսի և Եպիսկոպոսի, և օրհանութիւն սրբալոյս Մեռոնի: Օսոր յոդանտենչ սիրով գրեցոյց գերեքջանիկ և յոդներախտ այրապետն սրբանեալ՝ և արիաջան ովուառպետն ազգիս այոց՝ և սրբոյ Եթոռոյս Խջմիածնի, ծնող մեր հոգեոր և շնորհածին՝ և տէրն մեր գըթառատ՝ քաջ զիանական՝ բանիրուն՝ և Սստուածաբեալ Պիտոն բազմաշնորհ և գերիմասա Տէր Ոիմէօն Սրբազնակատար Կաթուղիկոսն Խրեանցի՝ և ծայրագոյն Վրահանայապետն հոգելնուաիր, առ ի լինել ինքեան յիշատակ հոգեոր ի սուրբ Եթոռս Խջմիածին: Որպէս զի ինքն յաւուրս իւր վայելեացէ, կատարելով զկարգը և զօրհնութիւնս սրբազնագործոցն, և յետ փոխմանն իւրոյ յաշխարհէ յետագոյ յաջորդողքն ԵՂթոռս սուրբ, և փոխանորդքն իւր՝ այրապետքն սրբազնք զսոյն վայելելով՝ յիշեսցեն զինքն ի սուրբ և ի մաքուր ազօթս իւրեանց աստուածահածոյս՝ հանդերձ ծնողօք իւրովք և հոգեոր դաստիարակօք:

Որ և այսու բարեգոյն դիտմամբ և խորհրդով ձեռնարկեալ ի հին օրինակսն, և զգուշութեամբ մեծաւ սրբազրեալ, և այլ ևս վայելչացուցեալ զարարողութիւնսն սոյն կարգաց սրբազնագործից և զիրատս սըն նոցին, և բարեպէս դիւրացուցեալ գրեցոյց ապա՝ ինձ թարմատար և ամենանուաստ ծառայիս իւրոյ և ձեռնասուն պաշօնէիս և օրհնածին որդւոյս իսկ յետնելոյ՝ Եփրեմապիմաստ Արդապետիս: Օսոր և երկու ետ գրել. զի զմինն սրբազնագործող այրապետն ունիցի ի ձեռին, ինքն՝ կամ յետագոյ յաջորդք իւր սրբազնք, և զմիւն՝ Խարտումիականին:

Յորս և ես ոչ եթէ առ հարկի և ակամայ՝ այլ ի սէր հոգեծին ծնողիս յիշեցելոյ և Տեառնս Անհագունի՝ սիրով մեծաւ ձեռնամուխ եղէ և զրեցի, և հասուցի իսկ յաւարտ, ի ԱՌՄԻՌ թուոջ մերում՝ և ի Մայիս ամսոյ ի, առ ի վճարել այսու գոնէ՝ իրրու մասամբ իւիք նուազագունիւ քան թէ բոլորովիմք՝ (զոր ոչ իսկ կարօղ եմ,), զպարտս հոգեոր որդիութեանս՝ որ առ նա: Օսոր տեսանելով շնորհակալ և օրհնածին որդւոյ սոյնոյ Տեառնս մերոյ սրբազնակատար Անհապետի՝ Տեառն Խրեմիայի Երբեապիսկոպոսի Յօշականցւոյ՝ քաջ քարտադրի և գեղեցկագիր նօտարի Սստուածաէջ սրբոյ Վրահիս՝ և նրբարուեատ նկարակերտի, շարժեցաւ և նոս ի յիղձ բարի՝ երփնազարդել զսոսա զեղեցկացոյն ծաղկօք և ձագազրօք, ի յազնիւ և ի զանազան երանգոյ և ի մաքուր ոսկւոյ, նախ ի սէր նոյնոյ հոգեոր ծնողին իւրոյ օրհնածնի մեծի Անհին (որպէս և ես), զի յիշատակն նորին հոգեոր՝ զարդարուն լիցի քան թէ անդարդ, և երկրորդ՝ ի սէր իմոյ որդիութեան և աշակերտութեանս իսկ՝ զոր ունէի առ նա, քանիք ինմանէ ունիմ ուսեալ զզիրս, որ մեծաւ երկամբ և աշխատութեամբ ուսոյց ինձ զարհեստս նօտարութեան. որում Տէր լիցի վարձահատոյց: Եշւ այսպէս ստացաւ Անհազան տէրն մեր սրբանեալ զբեզգեցկատուփ հատորքս երկուս՝ սրբարտը և կատարելագործիչ, ի լինել ինքեան յիշատակ հոգեոր իսուրբ Եթոռոջս՝ որպէս ասացաք, փափագելով ժառանգել զԱմօսածնին ասացեալ երանութիւն, ունելով զաւակ և զընտանի ի սիօն:

Որպէս ի վարդապետութեան իւրում, և յաւուրց Հայրապետանալոյն իւրոյ մինչեւ ցարդ՝ սովին բարի և հոգիշահնաւիանձու վառեցեալ՝ արար և ստացաւ ինքեան զբաղում յիշատակս հոգեւորս, թէ վասն հասարակութեան օդափ, և թէ յատկապէս վասն սրբոյ Աթոռոյս: Օսրս մի առ մի թուելին պարագայիւք՝ ըստ ուրում բերէ երկարութիւն, համառօտիւք միայն անցանելով՝ զզինաւորսն զոնէ ասացուք, առ ի չլինել ի մոռացօնս ի յետագայու:

Քանզի նախ ի Ա արդապետութեանն իւրում՝ արար զգիրս լուծմանց՝ արտաքնոցն զրոց, այս ինքն Պորֆիւրի ներածութեանն, և Սրիստոսի ստորոգութեանցն՝ և Պէրարմէնիսին, և Ե. ստածիցն Դաւթի Անյաղթի: Յաւել և դլուծմունս ի զիրս Պրոկոպի իմաստնոյն՝ ի վերայ լուծմանն Արմենի վարդապետին ջուղայեցւոյ, յատկացուցեալ խաչաձև նշանիւք զեւրն: Վրար և զերկահատոր զիրս քարողից, զառաջինն ըստ կերպի ծառից և ներբողենից, և զերկորդն՝ տարեկան քարոզ: Պարզաբանեաց և զինն տօմարն Հայոց: Եւ զնոր և անշարժ տամար ևս աբար Հայոց:

Եպա ի Հայրապետանալոյն իւրում ըսկիզբն արար շնութեանց սրբոյ Աթոռոյս, զարտաքին պարիսպն շրջապատ՝ ի հիմանէ նորապէս շնուեաց, և զամենայն շէնան որք ի պարիսպն արտաքին՝ նորապէս շենեաց, այս ինքն զգումն բոլոր՝ և զնիաստանն, և զջորեստանն, զմարաքն քարեայ, զձիթահանսն, զհարաւակողմին՝ Պարեմափից կուսէ, զեխախտեցեալ էր, զոր ի հիմանէ նոր և

զեղեցկապէս շնուեաց. և յաւելեալ ևս քան զառաջինն ի տանիխն զզեղեցիկ և ընդարձակ վերնայարկս հովանոցս: Բնդ որս և զբաղանիսն և զքարվանսարայն որք յոյժ հնացեալ էին, ի հիմանէ նորուգեաց վայիլու քան զառաջինն: Եւ ի հիւսիսակողմն պարսպին շնուեաց զնոր մոմատուն և զՊապրատուն, ուրոյն պարսպօք և պարտիզօք: Խսկ ի պարիսպն ներքին շուրջանակի ջրմուզս ետ փորել վասն անչափ զիթութեանց Եկեղեցւոյն և բնակութեանցն: *Երողեաց և զիէսն ամառնային սկզբանատանն, և զեկեղեցւոյ բոլոր տանիխն՝ և զերկոսին սիւնան՝ զներքին գասուն: Խսկ ի Հայրապետանոցին շնուեաց զերկուս այվանս, զմինն ի վերայ տանեաց հարաւակողման շնութեածոցն՝ հանդերձ այլ ևս յարկօք, և զմիւսն ի կողմն արեւմտից ի վերայ մեծ բըքոյն: Եւ զհիւսիսակողմն Հայրապետարանին ի յետուստ ընդարձակեալ բազմացոյց զյարկս ձմերոցս ի վերայ առաջնոցն: Եւ յառաջքան զայսոսիկ հեռացոյց զգեօղն ի նորակերտ պարսպէն որբոյ Աթոռոյս ի յաւահովութիւն նմին՝ օդնելով ծախուց շնութեանն. և զիայտակերտ եկեղեցի զեղեցիկ լայն և ընդարձակ շնել ետ ի նմա: Բնդարձակեաց զՊարի այզին՝ նոր յաւելուածնոքը, և ետ պարսպել: Եւ ի յարեկելակողմն սցգեսանհացն զայդի մի ևս նոր առեալ՝ պարսպեաց և զայն: Խսկ ի Պարի այդւոջն՝ շնուեաց զմեծ և զընդարձակ հնձան, և ըստ չափու երկայնութեան նորա՝ զայգան մի ևս մեծ: Բազմացոյց ևս վասն որբոյ Աթոռոյս ըզմէքատու գիւղորայս՝ վաղեմի Պարապաշիք և զբովք յետս առնելով ի տաճկաց

զհին մէքատու գիւղորայսն սրբոյ Եմուռոյս: Որք են, Եշտարակ, Մօղնի, Եղաւնատուն, և Զադավանկը, Եղուարդու Դ գանկ և կէսն: Եւ զՅօշական գեօղն՝ ըզբնիկ մէքատուն սրբոյ Եմուռոյս մինչեցարդ՝ Մուղանլու կոչեցեալ տաճիկքն զութեալ՝ և զետեղեալ ի նմա յաւուրց Վազարու Կաթուղիկոսին, և առ սակաւ սակաւ հաստատեցեալք անդ՝ արտասահաման էին արարեալ զայսն անաի, որք եկեալ աստ ընակէին: Խէպէտ և տաճկունքն տային մեղ զմուլք: Եմ սրբազան Տէրս մեր այնմ ևս յոյժ մեծագոյն ջանիւ տարեալ զհոդ՝ հանել ետ անտի զՄուղանլուն, և զայսն դարձուցեալ անդ՝ վերստին արար հայաբնակ՝ ոչ այնքան վասն մուլք լինելոյն սրբոյ Եմուռոյս, որքան ի սէր և ի պատիւ գերեզմանի սրբոյ վարդապետին Մեսրովեայ մերոյ թարգմանչի, որ կայ անդ ի ներբոյ սեղանոյն ամփոփեալ, և եկեղեցին ևս նորին անուամբ յորջորջե. գրեաց զթուղթ աշղերսանաց առ Եստուազօր Կայսերու հին Ուուսաց Եկատարինէ, և զամենայն Հայազունքն ժաղուն ժողովուրդսն՝ որք յիշխանութեան նորին՝ արար վերսարին Տէրունիս սրբոյ Եմուռոյս, հաստատուն հրովարտակաւ նորին: Օք յաւուրց Վազարու Կաթուղիկոսին վասն աղմիկի ինչ անցանելոյ ոստուցեալ էին ի սրբոյ Եմուռոյս ժողովուրդքն այնք, և ինքնազմուխ առաջնորդ հաստատեալ, և աստի Եպիսկոպոս Արշակ երթակ երակ ի սափական կամ այժմ՝ զԵպիսկոպոս Եսաաջնորդ յղեաց անդ՝ զնուիրակական գործն ևս նմա ասլով որպէս և յառաջ լեալ էր՝ ըստ օրինակի Զմիւռնոյ:

Նոյնպէս և զՊարին, և զԼարս, և զԵւլյանս ևս Տէրունի ետ առնել սրբոյ Եմուռոյս իւրեանց շթագայիւքն Կոկ և զԵրեանու երկու Եկեղեցեաց տանիսն՝ և զիսախտեալ տեղիսն ամենայն՝ և զՅօշականու կամուրջն ևս ետ նորսպել: Հաստատեաց և զՏպազրատուն ի սուրբ Եմուռոյս ի հիւսիսակողմն Հայրապետարանին: Եւ ի Գուանկաց բերեալ զվարպետայս՝ շինեցոյց և զթղթահանութեան գործարան ի հարաւակողմն սրբոյ Եմուռոյս: Որք մինչեցարդ չին լեալ աստիամ ի տանս արևելեան: Օք թէպէտ գտանի ի Պարսիկս արհեստ թղթահանութեան, (ուստի ևս բերել ետ զշինօղս գործարանի թղթահանութեան, որք և շինեցին իսկ՝ և հանին,) այլ անշահ և անպետք իմն էր թղթահանութիւն նոցին: Ա ան որոյ օժանդակութեամբ Խոչջիջանեան Գրիգոր աղային Զուղայեցոյ ի Շինդ բնակեցելոյ՝ (որ զթղթատան և զտպազրատուն ծախսն ամենայն ետ,) բերել ետ զվարպետան Գուանկաց՝ որպէս աստագք, և լաւագոյն շինեցոյց զթղթատունն: Եւ ի սոյն նորոդ ապազրատանս՝ թող զայլ գիրս՝ տպեցոյց նախ զփոքը ի զիրք մի աղօթից իւր արարեալ, կոչեցեալ Զրօսարան — Հոգեոր: Եպա զտօնացոյց Եկեղեցւոյ Հայաստանեաց սրբազրեալ՝ տեղաւորեաց զտօնսն փոփոխականս, և կանոնաւորեաց՝ հանդերձ այլ ևս ուղղութեամբք: Եւ զհատոր մի ևս արարեալ իւղերայ Լ. Օ տարեզրացն մերոց, կանոնաւորեաց զտեղիս և զժամանակս նոյն փոփոխական տօնիցն՝ եղեալ առ ընթեր և զձոյնս աւուրցն՝ և զամսաթիւսն՝ ընդ գէմ Եմթարմայից Օրացուցին, առ ի

խափանել զայն։ Եւ զերկուս հատորսն ի միասին յոյժ գեղեցկապէս տպել ետ, և տարածեալ ընդ ամենայն ազգս մեր՝ զըշը եւ կանոնեաց մեծաւ հարկագութեամբ՝ զՄխթարմայից Օրացոյցն մի և ընդունել, այլ զնոր Տօնացոյցն ածել ի գործ, որ և եղեւ այնպէս։ Եւ դայլ բարգում գործս բարութեան արար երջանիկ ձայրապետս մեր սրբանեալ, զորս այլ և ոչ թուելով աստէն մի առ մի, թողումք Այսմ՝ որ ի տիեզերական հրապարակին ունի միշել, և զվարձս ըստ բարի և բազմացան վաստակոցն հատուցանել։ Վահազի զբազմազան բարութիւնս արար սրբաբոյ Աթոռոյս, պայծառացոյց յամենայնի զսուրբ Եկեղեցին ազնիւ և մեծագին միշատակօք՝ և սպասիք պատուականօք, և զգեստիւք՝ և հանդերձեղնօք։ Օք ի պատճառս յաջողակութեան՝ և սիրելի զրոյն ամենայն ազգիս՝ և թղթովք օքհնութեան զամենեսեան շահելոյն, լցին յամենօւստ զսուրբ տունս ազնիւ յիշատակօք և բազմազան բարութեամբք, մինչեւ յայնպիսեաց տեղեաց ևս՝ յորոյց չէր մտեալ ի սուրբ Աթոռս զոնեա՝ լրազոյն ինչ տուրք հասարակ ։ Եռուիրակութեան։ Թողում զայն, որ զբազում որդիս օքհնածինս՝ և զաշակերաս շնորհակալս ստացաւ երանելիս այս՝ ի պայծառառութիւն սրբոյ Աթոռոյս, և ի հոգեոր ճոխութիւն ազգիս այոց։ Որք փայլին և փայլեցուցանեն յամենայն տեղիս, և սիրահարեցուցանեն զբոր ազգս առ սուրբ Աթոռս։ Ի ձեռն որոց բազմութիւնք բարեացն ստացելոց՝ մտին և մտանեն ի Մայրս լուսատու, և զարդարի սարարենիութեամբ և հողեոր խրախճանութեամբ՝ ի հրձուանս մանկանց իւրոց։

Արք՝ զբաւ տալով բանիցս, հայցեմ ի հանդիպող հարցդ և եղբարցդ իմոց ի Քրիստոս, մանաւանդ ի սրբազնագործ և Աստուածածարեալ ձայրապետացդ Արքա զանից՝ վայելողացդ զսոսա, զի ի հանդիպելն ձեր սոցա՝ կամ ի վայելելն՝ յիշեածիք ի Քրիստոսի սաքրափայլ աղօժս ձեր զգերերջանիկ և հոգեծին ծնօղն մեր սրբասանեալ՝ զՏէր Ակմէօն Արքազան Առաջուղիկոսն ամենայն այոց, հանդերձ կրկնակի ծնողօք իւրովք՝ առնել արժանի իւրոյ ողովանութեանն, և տալ փոխարէնս բազմաջան վաստակոցն բարեաց՝ յաւուր կոչման իւրոյ զգործողս բարեաց ի ժառանգութիւն կենացն անձկալեաց։ Յիշեածիք և զծազկօղ սորին և ուսուցիչն ինձ զարհեսաս նօտարութեան՝ զԵրեմիա Արքեպիսկոպոսն վերոյիշեցեալ՝ հանդերձ ծնողօք իւրովք։ Կաև զյատուկ երախաւառորն իմ և կնքահայրս իսկ զնախապատիւ սպասաւորն և օքհնածին որդին նոյնոյ սրբազան Ահշին միրոյ՝ զՄկրտիչ Արհիեպիսկոպոսն հանդերձ ծնողօք իւրովք։ Որ ի վարդապետութեան սրբազան Ահշին միրոյ՝ և ի Կուիրակութեան իսկ կոստանդնուպոլիս՝ սպասաւորեալ էր սմաքրանաջան հարազատութեամբ՝ յաւուրց սարկաւագութեան՝ իւրոյ։ Եւ ի ձայրապետութեան ևս զամենայն ծանրութիւնս և զհոգս ձայրապետարանին և սրբոյ Աթոռուոյս իսկ կրելով, և ի սպասաւորութենէն ևս չիւրջանալով, ապահով և անհոգ առներ զսա յամենայնի և ուրախացուցանէր։ Բնդ սմին յիշեածիք և զվարեիչն իմ՝ զիսահակ Արքեպիսկոպոսն Գեղամացի, որ ևս ի բնէ սպասաւորէր սրբազան Ահշին միրոյ, և ի մանկութե-

նէն վարժեալ առ սոսս սորին, ձեռնասուն
աշակերտ և օրհնածին որդի և պիտանի
սմին ի բազում իրս՝ ի թղթադրութիւնս
և ի հոգս տպարանին՝ զոր բարեյարմար
կարգաւորէր, և յայլ բազում գործո՛ որք
գրելով կամ ուսուցմամբ են, գոլով իրրու
ցուալ ծերութեան Ա եհին մերոյ գերեր-
ջանիի: Ընդ որս և զայլ ձեռնասուն որդիս
վեհիս մերոյ մեծի՛ ընկերակիցս մեր և օ-
ծակից և համշերակ և վրալս յիշեսջիք
ի Տէր: Առւսկ յետոյ արասջիք արժանի
յիշման ի Վրիստոս և զիս յեանեալս յա-
մենայնի զիփրեմ ապաշնորչ վարդապե-
տրս՝ զգծօզս երկոցունց տառիցս շնորհա-
բաշխից, որ բաց ի գրութեանս աշխա-
տութեանց, ջանս եզի մեծապէս ամենայ-
նիւ համանմանս միմեանց գծագրել զեր-
կոսին հատորըս, որ և արարի իսկ՝ որպէս
տեսանէք ահա, թէպէտ գտանիցին ևս ինչ
չհամեմատողք միմեանց: Եւ եթէ զը-
տանիցին ինչ սիսամունք ի գրուածս սո-
ցին, զայնս իմոյ իսակութեան տուեալ՝
ներեօջիք: Եւ ընդ իս՝ նաև զծնօզն իմ
զհանգուցեալս ի Վրիստոս զտէր Յով-
հաննէս քահանայն, և զլանդուխան, և
զայլ ազգայինս իմ զամենեսեան՝ յիշել
աղաչեմ, ի տէր: Եւ դուք յիշեալ լիջիք
յոդորմութիւնս և ի զթութիւնս Տեառն
աստուծոյ՝ յաւուրն մեծի: Ամէն:

Թէ՞ ո՞րէ՞ զի՞ն այսուէի հոնեցառ առ Տէր
եւանելի Հայրապետն Քէ Տէր Ուէնօն, և
նորու յԱբու Հայրապետուննեան Տէր
Գունէսս Երեւակսէնպոսն: Եւ իսան ան-
ցից ո՞յ յասու՞ր յայսու՞ի համառուս:

Եստանօր և զայս ծանուցից կոկծմամբ
մեծաւ ցանկալի Հարց և Եղբարցդ իմոյ:

Օք դիրքս այս՝ (որպէս ի վերոյ ասացաք,)
ի ՈՒՄԻՒ թուոցն և յամնեանն Մայիսի
ի Դ ել ի ձեռաց իմոյ, և աւարտեցի
զբովանգակ գրութիւնս սորին: Իսյց ոչ
վաղվաղակի կարացաք կաղմել տալ. զի դեռ
անկատար էր ծաղէկն, և մնայաք այսմ
ևս զերծմանն՝ զի կատարեալ լիցի ըստ
ամենայնի, և ապա կաղմել տացուք. վասն
որյ մինչ պիտոյանսյր երջանիկ Տեառն
մերոյ բազմերախտի՝ Տէր Ուէնօն սրբազն
Կաթուղիկոսին՝ ի կատարել սովաւ զալը-
բազնագործութիւնս ինչ, կերպիւ մոլով
կապէաք զտետրսն ի միմեանս, և իբրու
զամբողջ գիրք արարեալ՝ տայաք գերեր-
ջանիկ Տեառն մերոյ՝ առ ի կատարել
զարբազնագործութիւնս հարկաւորեալս:
Որով քանիցս ձեռնագրեաց զի պիսկոպու-
սունս և անգամ մի օրհնեաց զարբարյա
Մեսոն ի ՈՒՄԻՒ թուոցն: Իսկ մինչ
հասաք ի ՈՒՄԻՒ թիւն մեր, որբազն Տէ-
րըն մեր պարապեալ կայր ցաւազին անձամբ
իվաստակս հոգեորս: Օք շարադրեաց խո-
րին և Աստուածատուր իմաստութեամբ
իւրով և նուրբ Եստուածարանութեամբ
զգիրք մի ընդգէմ երկարնակաց՝ Պար-
տավար կուելով զանուննն: Օք յորդու-
րելով զւգու Հայոց հետանալ և ի բաց
կալ յաղանդոցն երկարնակաց՝ իբր թէ
վճարէ զպարտս հոգեորս Հովուապե-
տութեան իւրոյ: Եւ է Ի հատոր: Օչոր
և ետ տպագրել նորոգ թղթով յիւր շե-
նեալ թղթատունն՝ ի յիւրակերտ տը-
պարանին: Եւ զառաջին հատորն տպեալ
յաղագս տօթոյն խստութեան ել ի կող-
մանս դաւարին Կաց, ուր և մնաց ամի-
սը Ի: Եպա զարթեաւ բարկութիւն մեծ
ի Տեառնէ և ի վերայ երկրիս Երեւանու-

ըստ Ժողովութեան և անշափութեան մեռաց մերոց։ Օ.ի յառաջ քանի զայս՝ Վ.բաց արքայն ունելով զնուովութիւն ընդ իշխողին երկրիս՝ եկն ի վերայ սորաբազմօք զօրօք՝ ի մուտս ամսեանն Ուեպատեմբերի, և յերկուս ամիսս նստեալ՝ չըշկարաց առնուլ զրերդն, և խաղաղութեան ևս չեղեւ հնարի։ Ա.պա զ՚ի բերդէն արտաքոյ գտանեցիալ երկրականքս բուլը՝ թէ զհայս և թէ զտաճիկս՝ փարեալ ի Վ.բացտուն՝ ամայացոյց զերկիրս, և չուեալ գնաց տատի։ Եւ որքան աստ էր՝ սրբազն Տէրն մեր բազմիցս աշխատեցաւ առնել զհաշտութիւն, յոր և իշխողն երկրիս և երկրականքս ի բերդէ անտի գրով հարկէին գտանել զհնարն խաղաղութեան։ Ատկայն որքան ջանաց, անհնարին եղեւ, զի պահանջմունք արքային յուլով էին յոյժ, և բռնաւորն երկրիս զայն չկարեր տալ, վասն որոյ չեղեւ հաշտութիւն, և աւերեցաւ երկիրս, և մնաց շնութիւն ի սուրբ Ըթոռս միայն, և ի մերձակայ գեօղն իւր, զոր ի պատիւ սրբոյ Ըթոռոյս և Արբազանին՝ եթող Արքայն Վ.բաց։ Եւ յայսց եղելութեանց՝ Արբազան Տէրն մեր բազումս վշտացաւ մորմուքելով ի վերայ աւերման երկրիս՝ և վրարման ողորմելի ժողովթղոց մերոց ի յօտարութիւն, և ի խոնդարումն եկեղեցեաց, և ասկս բազմակերպ մնասակութեանց սրբոյ Աթոռոյս։ Օ.ի որովհեաւ ոչ գոյր շնութիւն յերկրոջս բաց ի սրբոյ Աթոռոյս՝ որպէս տաշաք, վասն որոյ բազմութիւնքն զօրացն զպիտոյս իւրեանց տատի լցուցանեին, և յետոյ ի գնալ զօրացն, բերդարգելքն եկն յամենայնէ մերկ և դատարկ, և նոքա ևս զեւրեանցն

պակասութիւն աստի լցին՝ թէ սիրով՝ թէ հարկիւ, թէ կամայ՝ և թէ ակամայ։ Եւ բաց յայսցանէ ի յերկուս ամիսս ի մեջ զօրացն մնալով վասն հաշտութեան՝ և զերեաց աղատման, (որ և աղատեաց իսկ զեազումն ի Հայոց և ի տաճկաց,) յոյժ վշտացաւ ի ցըտոյ և յանձրեց, և եղիտ զմեծ իմն հիւանդութիւնս՝ ունելով և զվերօդրեալ մտատանջութիւնսն և զցաւսըն, այլ ոչ կարոց զերծանիկ ի հիւանդութութենէն։ Եւ ի Ա.Մ.Ի.թ.թուոյ Կոյեմշ բերէն մինչեւ ի Ա.Մ.Ի.թ.թուոյ Յուլիսի Ե.Օ. եկաց այնու հիւանդութեամբ։ Խակի Ե.Օ. օրն Յուլիսի որ էր Վ.արդավառի կիւրակէն, փոխեցաւ առ Վ.ը.իստոս յոյն ամենեցուն՝ բարի և երջանիկ մահուամբ՝ սրբամնեալ և երջանիկ Տէրն մեր և Ըստուածարեալ Հայրապետն բարեջան՝ Տէր Ամեծօն սրբազն Կաթուզիկասն, և ի յերկուշարաթի օրն թաղեցաւ ի ձախտեկողման գաւթի սրբոյ վանիցն Գրայիանէի սրբութւոյ կուսին՝ հուպ Տէառն Երբաշամու սրբազն Կաթուզիկոսին Մշեցւոյ, և զհամայն երկամբ ծնեալ զաւակունու իւր հոգեորս՝ եթող յորբութեան՝ և ի սուդ անմիտթար։ Որոյ զհողին լուսաւորեսցէ Տէր՝ և հանգոււցէ այցելութեամբ ընդ սուրբս և ընդ սիրելս Անուան իւրոյ՝ գասելով ընդ ճշմարիտ Հայրապետացաւ պետացն սրբոց։ Խակ՝ մինչ ետես Լուսահոգին զինքն մերձեալ ի վախճան, հոգացաւ վասն սրբոյ Աթոռոյս զհոդ մեծ։ Օ.ի տակաւին յաւերութեան և ի մեծի խըռովութեան կայր երկիրս, և գոյր երկիւլ վերսան գալոյ Վ.բաց Արքային յոյս երկիր։ Վ.ասն որոյ մտածեաց՝ զի թէ անտէր մնասցէ Աթոռոս սուրբ՝ ղիպելոց է

վեսոսուց մեծացր Եւ զի յայսմ ներկայի
Նպիսկոպոսաց ընտրելին՝ և արդարեւ ար-
ժանաւորն գերազունի տատիճանին Հայ-
քաղետութեան՝ էր աստ ի պատրաստի,
որ էր Տէր Պռկաս Արքեպիսկոպոսն
Կալվեցի, բնիկ միաբան սրբոյ Աթոռոյս,
որ էր շնօրհածին և անդրանիկ որդի սի-
րելի՝ Հոգելոյս Տեառն մերոյ: Որ ի Կուի-
բակութենէն և յերկոտասանամեայ Ա-
ռաջնորդութենէն Օմիւռնոյ եկեալ անա-
կայր առ Հոգելոյս Տէրն մեր ի մեծի պա-
տուի և յարդութեան: Պասն որոյ՝ կտա-
կեաց վասն նորա՝ զի յետ վախճանին իւ-
րոյ՝ փութասպէս նստուացեն զնա Աթոռ
Հայրապետութեան, զի մի՛ մնասցէ Աթոռ-
ուը սուրբ ի յանախիրութեան. որում
հաւանեալ Վիաբանից սրբոյ Աթոռոյս և
երկրացւոց ընտրեցին զգերեջանիկ Արք-
եպիսկոպոսն Տէր Պռկաս՝ ի Կաթու-
ղեկոսութիւն աանս Հայոց: Որոց և յոյժ
երկուցեալ ի յաստցեալ երկիւղիցն, թէ
զուցէ վարվագտիկ լինիցին, ի յառաջեկայ
երկրորդ Ակերակէին՝ որ էր Օգոստոսի Բ,
և եօթներորդ օր թագման Լուսահոգւոյն,
օծին զնորոգ ընտրեցեալն ի Հոգելոյն սրբ-
ուոյ՝ զՏէր Պռկաս և մաքրակինցազ
սրբազն Կաթուղեկոսն: Որում աացէ
Տէր զիեանս երկարս և խաղաղականս՝ ա-
պահով առնելով յամենայն Հոգեկան և
ի մարմնական փարձութեանց:

Եսկ ապա ի յաւուրս նորոգ շայրաւ
պիտութեան վերոյիշեցելոյ Վեհիս մերոյ
Արքազանին լրացուցեալ դամենայն պա-
կասութիւնս սոցին, կազմել ետու զսոյն
երկոսին վաստակքս ձևաց խոց՝ ևս Եփ-
րեմ ապիկար վարդապիտու, և ընծայեցի
սոյնոյ Ըստու ածլուաիր և նորոգ շայրաւ

սիւտիս մերոյ Ալբազանի, զի զվայելը լին
սըբազան ծնողին իւրոյ Հոգեծնի՝ ինքն
շնորհածին և անդրանիկ որդի նորին վա-
յելեսցէ բարեաւ, և յիշեսցէ զնո ի յար-
ժանահայց յաղօթս իւր առ Տէր՝ առ-
նել արժանի իւրոյ գթութեանն և ողոր-
մութեան։ Եւ զժարմատար վաստա-
կօդքս իսմա ևս՝ յիշելով առ Տէր։ Յորմէ
և ինքն յիշեսցի իրիւրապատիկ բարու-
թիւնս յերկափի կեանս իւր՝ հանդերձ
հոգեոր և մարմնաւոր ծնողօք իորովք՝ և
համայն իւրայինովք՝ ի փառս ամենասրբը
Երբորդութեանն Հոր և Որդւոյ և Հոգ-
ւոյն սրբոյ, որ է օրհնեալ յաւիտեանս։
Եմին։

Այս յիշատակարանը Մեծ Մաշտց
կոչուած Կաթուղիկոսի և Եպիսկոպոսի
ձեռնադրութեան՝ ևս Ոիւաօնիօրհնու-
թեան Աշաւոցէն ընդօրինակելով իւղա-
բնծայի ցաք:

Յիշատակարանիս մէջ աւելի հետաւ
քըքըրական և նշանաւոր նոր բան չկայ,
միայն թէ Խփրեմ վարդապետէն՝ — որ
յետոյ Ամեռուղիկոս եղաւ, — և Պաւ-
կասի վերայ մի քանի տեղեկութիւնք
գրուած է, իսկ Վիմէօն բազմարդիւն Հայ-
քապետի համար զրուածներն մեծաւ մաս-
սամբ ի ջաճբարն հրատարակուած են, և
որքան ցանկալի էր՝ որ լուսահոգի Խփրեմ
Ամեռուղիկոս՝ վերև հրատարակեալ յիւ-
շատակարանի մէջ Վիմէօն Հայրապետի
լիակատար կենսագրութիւնը ամփոփէր: